


ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե . ՓՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է
գրութիւն պէտք է ուղղել առ
Տնօրին ԱՐՇԱՒԱՅՍ զբարի
ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN
Dirac.-propr. du journal arménien
ARCHAEOLOGIE
LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵՄԲԵՐԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դահիւն .	60
Վեցամեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐԻ	
Տարեկան Տրակի	20
Վեցամեայ »	12

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՈՒԿ
ԵՒ ԹՂԹԱՄԱՐԻ ԺԱԽՔԸ
ԽՆՔԱԳՐՈՒՄԵԱՆՈՒ ՎՐԱՅ Է :

Խնքագրութեան ուղղութեամբ
գրութիւնք եւ չ'են տրուիր

Ա.Զ.Գ.Ս.Ր.ՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելի են

Ի Մ Ք Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ա Չ Դ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. բաժա-
նորդներէն ջերմասկի կը խնդրուի որ բա-
րեհաճին նախորդ տարիէն մնացեալ պար-
տոց կցելով յղել նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԻ
Տարեցրջակի բաժանորդագրիւնը, եւ հարկ
չը թողոյ մասնաւոր դիմումներու, որոնք
նոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱ-
ՎԱՅՍԻ տրդին բազմազարդ Տնօրինութեան :

ԳՈՐԾՅՈՆ ԵՆՈՒՄՆԵԱՆ
ՆՈՐ ԲԱՌԻՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ
ՖՐԱՆՍԱՀԱՅ

Այս անունը կը կրէ այն հոյակապ աշ-
խատութիւնը, զոր կատարած է Ն. Ա. Բ.
ԻՇԵՒԱՆ ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ և զոր այս
պահուստ թղթատելու երջանկութիւնը կը
վայելենք :

Կէս դարէ աւելի ժամանակի կարօտ
այս նշանաւոր գործը, որ Բարձրագատիւ
Հեղինակին կողմէ նուիրուած է Տիկին ԱՒ-
ՖՈՆՍԵՆ ԼՍՊՊԵՐԻ յիշատակին, հետեւեալ
չափազանց համեստ և կարի համառօտ նա-
խաբանը կը կրէ :

«Սոյն երկասիրութիւնն պատրաստած
ժառանգիս, իմ փառաբան եւ միակ մտա-
ծուքիսն եղած եմ՝ օգտակար լինիլ ազգիս
եւ հայրենակցացս :

«Երբ յաջողեցայ սոյն դժուարին ձեռ-
նարկին մէջ, այս պիտի լինի իմ փառա-
բանութիւնն ու փառքն :»

Գ . ԼՈՒՍԻՆԵԱՆ

Փարիզ 1 օգոստոս 1900
Լուսինեալ օրակոց
Նեոյի - Սենի վրայ

Միմիայն առաջին հատորը, որ էն
սկսելով կը վերջանայ և 1060 մեծագիր
ու եռասուն էջերէ կը բաղկանայ, այս
համառօտ բայց պերճախօս նախաբանին կը
յանձնէ Բարձր. Մատենագիրը :

Գործը ինքնին կը խոստովանի իր մեծ
արժէքը : Հայոցս համար ամենամեծ պա-
կաս մը լրացնելու ուսմանուամբ, բազմա-
կողմանի հանգամանքներով օժտուած սոյն
հոյակապ աշխատասիրութիւնը — միակը իր
տեսակին մէջ — Ֆրանսական ճոխ մատենա-
գրութեանց մէջ ամենէն առաջին տեղը գրա-

ւողն այնչափ անգամներ նորանոր տպագ-
րութեանց արժանացած Բիէրլարուսի բա-
ռագրքին հետ մրցելու յատկութիւնը ունի-
նա ճոխագոյն պարունակութեամբ և իր գե-
ղակերտ նկարներով, բանալին է սա այն
լեզուին, որուն մերայինք այնչափ հետա-
մուտ են ուսանելու, այժմ կը գրուի մե-
րազնէից ափին մէջ՝ լիակատար վիճակի մը
վերածուած :

Ն . Բ . Իշխան Գուրտոն Լուսինեան
միայն կարող էր այսպիսի նշանաւոր երկա-
սիրութիւն մը պատրաստելու փառքին ար-
ժանանալ : Նորին Բարձրութեան միայն տրը-
ւած էր նուիրել անոր համար երկար ժա-
մանակ . յարտեալ, անընդհատ ու անխոնջ
աշխատութիւն և ի հարկին դրամ :

Արդարեւ ունեցած ենք մեր ազգին մէջ
մեծափառութեամբ մեծատուններ . շլացուցիչ
տիպաբաններով զարգարուած անուններ, մեծ
գիւտնադէտներ ու նոյն իսկ գիտնականներ .
սակայն ասոնց և ո՛չ մին վայրկեան մը
խոկացած է օժտել մեր ազգը ո՛ր և է եր-
կասիրութեամբ մը, որ եթէ չ'կարենայ
հաւասարիլ նոյն իսկ, մեր այս քանի մը
աննշան տողերուն նիւթ ընծայող հոյակապ
աշխատասիրութեան, գոնէ անկէ նուազ
արժանաւոր, բայց գէթ մերազնէից օգուտը
չօչափող երկասիրութիւն մը լինի : Հետե-
ւաբար անգամ մը ևս կրկնելու իրաւունքը
կ'ունենանք թէ՛ Ն . Ա . Բ . Իշխան Գուր-
տոն Լուսինեանի բարձր մտքին վերապահ-
ուած էր այս գեղեցիկ և օգտաշատ մտա-
ծումը յղանալ և իրագործել :

Ֆրանսահայ Պատկերազարդ Նոր Բառ-
գրքի առաջին հատորը, որ այժմ մեր ձեռ-
քը կը գտնուի, ոչ միայն իւր ճոխ պարու-
նակութեամբ ու ճաշակաւոր նկարներով
կուգայ ներկայանալ Ֆրանսերէն լեզուի
հետամուտներուն, այլ զայն ունեցողները
արժանի պիտի ըլլան վայելելու ներկայու-
թիւնը Բարձրագատիւ Մատենագիրին, որուն
մի գեղեցիկ ու ճաշակաւոր լուսանկա-
րը զետեղուած է բառգրքին առաջին էջե-
րուն մէջ և վստահ ենք թէ՛ ոչ ոք պիտի
կշտանայ, գիտելով այդ ծերունագրող և
հեզութիւն կաթկթող գէմքը :

Ն . Ա . Բ . Իշխան Գ . Լուսինեան՝ իւր
հեղինակութեան մէջ ամբարած է հին և
նոր հայերէն բառերուն ամեն տեսակները,
իւր կողմէ հեղինակուած բազմաթիւ բառեր
ալ աւելցնելով անոնց վրայ :

Բարձրագատիւ Իշխան Լուսինեան իր
նախորդ երկասիրութեանց վրայ աւելցնե-
լով ներկայ հոյակապ աշխատութիւնը, ի-
րաւունք կուտայ մեզ՝ իր բարձր արժանեօք

իրաւամբ ստացած այնչափ բարձր տիտղոս-
ներուն հետ, տնուանել զինքն ԱՇԻՍ-
ՏՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍԸ :

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ ՖՐԱՆՍԱՀԱՅ ՆՈՐ ԲԱՌ-
ԻՐԻՆՆ առաջին հատորին գինն է 25 ֆր .
նոյն գնով քիչ ատենէն հրապարակ պիտի
ելլէ նաև երկրորդ հատորը և զայնս ստա-
նալ փափաքողները պէտք է դիմեն ուղղա-
կի Բարձրագատիւ Մատենագիրին՝ ի Փարիզ,
և ի Բիւրջանդեան գրատուն ի Պոլիս : Թերթիս
Տնօրինութիւնը այժմէն միջոցներ ձեռք
առած է սոյն կարևոր հեղինակութեան
օրինակներ ունենալ ժողովրդական Տպա-
րանին մէջ, եգիպտահայոց մէջէն զայն ու-
նենալու փափաքողներուն դիւրութիւն մը
ընծայած ըլլալու համար :

Ե .

ԱՒՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԱՒԱԶԱԽՏ-ՀԱՍՍԹ (Կրտսելի)

Շարունակութիւն նախորդ թիւին

Բ . ԼՈՒՍԱՆԱՏԱՏԱԿԱՆ ԱՒԱԶԱԽՏ . — Լու-
սածնատական կամ պիտակ առաջախօս միզանցը-
ները պատող լորձնաթաղանթին բորբոքման ար-
դիւնք է : Արդարեւ, այս բորբոքումէն յառաջ
եկող խլինքը խմորի պէս կ'ազդէ միզիտին վրայ
և զայն աւշակային բնածխատի ու ջուրի կը
վերածէ . արդ, աւշակային ներկայութեամբ մէ-
զին մէջ կ'ոմոնաւորուի գտնուող եւ հոն լուծ-
ող մագնէսիոյ լուսածնատը՝ աւշակամագնէ-
սիական կրային լուսածնատի կը փոխուի, որ
կալաքարային հոսանումներու մէջ անլուծելի
ըլլալով՝ կը սուզի, ըստ որում ապավիթա-
կան մէզերը կալաքարային բնոյթ ունին :

Կրային լուսածնատը՝ որ կ'անոնաւորուի
մէզին մէջ կը գտնուի եւ անոր թթուութեան
համեմատութեամբ լուծանելի է, մէզին կալա-
քարային վիճակ մը ստացած ատեն յատկը կը
նստի : Ուրեմն, լուսածնատական աւազախօսը
աւշակամագնէսիական ու կրային լուսածնատ-
ներէ կազմուած է, եւ իր ծագման սկզբնապատ-
ճառը միզանցքներուն, նամանաւանդ միզափամ-
փուշտին նախնական մէկ բորբոքումն է :

Լուսածնատներէ ձեւացած աւազն ու մած-
ուածները ճերմակորակ գոյն մը ունին եւ մե-
նակ առաջախօս անունով կը ճանչցուին առհասարակ
: Անոնց հետքը միայն կալաքարային մէ-
զերուն մէջ կը նշմարուի, ինչու որ թթուները
կը լուծեն հողային լուսածնատները : Կրային
լուսածնատի մրուրները սպիտակ թափանցիկ
գնդակներու երեւոյթն ունին եւ անորոյ ծիր-
քով սահմանափակուած են . սակայն, աւշակա-
մագնէսիական լուսածնատները ընդհակառակը
կատարելապէս նշմարելի են իրենց պայծառու-
թեամբ : Աւշակեղէն մէզերու մէջ գոյացած մը-
րուրները ճերմակորակ են . մանրացողին ներ-
քեւ դարանկիւնախարխիս հատուածակողմներու
պէս կը տեսնուին եւ ծայրատուած բորբոքու-

ձեւն ունին : Ասոնք թիթուներու մէջ շատ գիւրաւ կը լուծուին :

Գ. ԹՐԹՐՆ ՉԿԱԿԱՆ Ա.Ի.Ա.ՉԱ.ՍՏ. — Թրթրնջկական աւազախորը՝ նախորդներէն խիստ հազուադէպ, ծագում ու կախում ունի մեծաւ մասամբ սննդառութեան եղանակէն : Ծառ մը բոյսեր, մանաւանդ թիթուիչը, ջրկոտեմը, ոսկեխընձորը, բուսական կարգ մը գեղերը՝ ինչպէս խաւարծիւրը, կը պարունակեն թրթրնջկական թիթու, որ ի կազմութեան անկատարութեն կը սպառի, եւ կրային թրթրնջկատի հանգամանքով վերստին կ'երեւի մէջին մէջ : Կրային թրթրնջկատէ կազմուած թրթրնջկական մածուածները թիթու եւ մերթ անգոյն ու պայծառ մրուր մը կը ձեւացնեն : Մանրացուցին ներքեւ ու թանկիւնային կերպարան մը ունին, եւ երկու անկիւնագծերով խաչաձեւ կտրուած ըլլալուն՝ նամակապահարաններու մանրանկար մը կարելի է համարել զանոնք :

ՊԱՏՃԱՌԻՔ. — Աւազախոր թիթու ամէն տարիքի մէջ տեսնուած, սակայն աւելի 50 տարեկանէ վեր եղող անձերուն յատուկ է, ինչպէս միզափամփուշտի քարն ալ աղայոց : Սաղմին կազմութեան մէջ իսկ միզական թիթուէ ձեւացած մածուածներ նշմարուած են : Այս պարագային սեռերու զանազանութիւնը ուշագրտու է : Երբեք կրնանք աւելի ենթակայ են, որոյ միակ պատճառը իրենց ծննդական գործարաններու կազմութեան տարբերութիւնն է : Երկու սեռին մէջ փորձերով հաստատուած բաղադրական համեմատութիւնն է 3 աւ 1 :

Օղբ, հողին բնական վիճակը, խմելի ջրերուն բաղադրութիւնը, կենցաղավարութիւնը եւ սննդառման եղանակները այս հիւանդութեան նկատմամբ իրենց սեփական ներգործութիւններն ունին : Դնդերներուն ու մորթին անբաւական գործունէութիւնը գլխաւոր պատճառներէն մէկն է : Կարմիր աւազախոր մէջը թիթու եղող մարդու յատուկ է, եւ այս երեւոյթը յօդադատէ, յօդացաւէ տառապող եւ ծայրայիտօրէն ամիս, հակիթ կամ բորակածնաւոր կերակուրներ գործածող անձերուն մէջ ի յայտ կուգայ :

Աւելի հասարակ է հարուստներուն՝ որք միշտ միտով, որսի կենդանիներով կը սնանին, առատ գինի, չափազանց սպիտակ ու կազեին ըմպելիներ կը գործածեն, անգթօրէն չաքարտ կամ արուեստական սաստիկ թիթու օշարակներով կը ծանրաբեռնեն իրենց մարտդակայն գործարանները, եւ անփոփոխ օդի մէջ գտաւարկ ու նստողական կեանք մը վարելով՝ կ'ընդհատեն մարմնոյն մէջ կատարուելիք թիթուակացումները, որով արտադրելի միզական թիթուին քանակը կ'աճի, եւ որ տեսանելի ու իրական պատճառն է խիտին այս զանազանութեան : Բնական ու մարդու ջուրի անգործածութիւնն եւս գլխաւոր շարժառիթ մը կրնայ սեպուել, ըստ որում այս կամայական թերութիւնը ներքին տարբերութեան լուծականութիւնը նուազեցնելով՝ կը կեղտոնացնէ մէջը, որ հետզհետէ կը մածնի պարարտ կերակուրներու անփոփոխ գործածութենէն առաջ եկող թիթու լուսածնատանրուն առատութեան պատճառաւ : Այս հիւանդութիւնը չարքաշ ու գիւղացի փողովուրդներու մէջ քիչ անգամ կը տեսնուի : Կլիմաներու ներգործութիւնը կտրուողութիւնէ զուրկ է, ինչու որ Մոսկուայի մէջ գտնուող աւազախորներուն քանակը եզրպատի մէջ եղողներէն նուազ չէ :

Լուսածնատանրուն աւազախոր երկարատեւ գոտարամարտութեամբ, ջրացաւութեամբ եւ ջրային պէսպէս խանգարմամբ տառապող անձերուն սեփական է : Դարձեալ յայտնի պատճառներ նկատուած են չափէ գուրս ընթերցումը, քնատութիւնը, չարաչար աշխատութիւնը, շուտայտ կենցաղը եւ գիւսանազիտական նստուկ ու տաղտկալի պաշտօնավարութիւնը :

Ախտին այս երկրորդ զանազանութեան տարբերութիւնը միզանցքներուն ապավիտութիւնը ըլլալով՝ իր սովորական պատճառներէն մէկն ալ մենամոլութեան անձնատուր եղող անձերուն՝ յորովակի մէջին մէջ տեսնուած ձեւովի գիւրաւ կենդանածին հեղուկէն տարբեր բան կարծելով՝ զպացած երկիւզնին է : Այս տեսակ պարա-

զաներու մէջ մանրադիտական քննութիւն մը կատարել խիստ հարկաւոր է, հիւանդներուն արտուրբերին անհիմն կամ իրաւ լինելը հաստատելու համար :

Միզական անտակրութեան ժառանգական ըլլալն ալ ստուգուած է վերջնականապէս, եւ յօդադատէ, յօդացաւէ կամ միզական աւազախորէ տառապող ծնողներուն զաւակները անվիճելի կերպիւ տրամադիր ու ընդունակ կ'ըլլան այս հիւանդութեան :

Կ. Գ. ՈՒՋՈՒՆՆԱՆ
(Մեացեալը յայտնողով)

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ

Տէր ստեղծեց տիեզերքը յօշոնչէն, Ջուրով պատեց երկրագունտը չորս կողմէն, Եթերի մէջ ամպերը նա տարածեց, Չերկնակամար աստղներով զարդարեց. Գառնակ տարերք անոր կամքով կը կըտուին, Եղանակներ ըստ իւր բանին հոլովին : Հարկ յարգանաց անբաւ կարին տայ երկիր, Հըպատակին անոր չուտա, Թագակիր : Տիեզերքը անոր միայն պատկանի, Անեղաբոյ ծովը նովաւ խաղաղի : Կատողած հովեր անոր ձայնէն հանդարտին, Նոյն իսկ արեւ դադար տայ իր շրջանին : Ամեն բանի Տէր եւ Պատճառ ինքն Աստուած, Ամենքն ալ կան եւ մընան յայն փարած : Առանց անոր անհրաժեշտ է գոյութիւն, Նա է միայն մահկանացուաց բաստութիւն : Թարգմ. ՆԵՕՅԻԹ ԲՕԹՐՈՒ

Ո Ղ Բ

Ո՛վ դուք ամբողջ լապտերք երկնից անհամար, Տուէք վերջին հրաժեշտ մեկնման հէգ զօրին, Ո՛վ կապուտակ գեղածիժաղ գուր կամար, Թախէ՛ կայլակ ջինջ ի վերայ անմահին :

Ո՛վ վեհ վկայք հէգ թշուառին դո՛ւ լուսին, Սփռէ՛ խաւար, պատէ՛ մռայլ, հիւա՛ մուծ վերայ լքող անխիղճ անտիրտ ճիւղին : Փակէ՛ սիրտդ, մի՛ ունենար երբէք գութ :

Դժոխք ողորց, հծծիւն ոգւոց տրտմագին, Սարսուռ տագնապ եւ խայթ գոնեայ վիշտ ժըխտր, Տեղան անէծք, հուր ու կայծակ մոլեգին, Վերայ լքող անխիղճ անտիրտ ճիւղին : Ա.ՐՏԱՇԷՍ ՄՍՐԼԵԱՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Ր

Լահէյ 9 Դեկտ. — Հօլանտական կառավարութիւնը՝ Անգլիական կառավարութեան իմացուցած է որ, խորհրդարանի նախագահին առ Գրիւկէր ուղղած նամակին պատասխանատուութիւնը իր վրայ չ'առնէր, այդ նամակին մէջ երեսփոխանը կ'ըսէր թէ կը յուսար որ Գրիւկէր պիտի յաջողի վերջ մը գնելու այդ անարդար ու բարբարոս պատերազմին : Եւ երկու Հասարակապետութեանց անկախութիւնը պիտի կրնայ վերահաստատուել :

Լոնտոն 9 Դեկտ. — Նախագահ Գրիւկէրի նկատմամբ, այլեւայլ շրջանակներու մէջ հետզհետէ համոզում մը կը գոյանայ թէ՛ նախագահին պատուիրակութիւնը կատարեալ անյաղողութեան պիտի դատապարտուի :

Լահէյ 8 Դեկտ. — Թագուհին ընդունած է Պ. Գրիւկէրը, ունկնդրութիւնը շատ կարճ եղած է :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Տէ՛վէթ-ՍՏՕՐԻ ԱՌՈՒՄԸ. — Վերջապէս Տէ՛վէթ-Ստորբի առման մանրամասնութիւնները մեզ կը հասնին. ասիկայ շատ կարեւոր ու փայլուն զինուորական գործողութիւն մըն է եւ որ ճիշդ այն պահուն կը պատահի, երբ Բարեյուսայ կացութիւնը շատ վտանգաւոր ու խարխուլ կ'սկսի գառնալ Անգլիացոց համար :

Անգլիական սպայակոյտը այս պարտութիւնը կատարուելէն 8 օր ետքը մէջտեղ հանեց, երբ Պօէրները արդէն քաղաքը պարպած էին, իրենց բոլոր աւարները մէկտեղ տանելով :

Նոյեմբերի 23 ն էր, Տը Ուէթ փառաւոր զինուորական էջ մըն ալ աւելցուց Պօէրական արդէն երկար յաղթութեանց ցուցակին վրայ :

Իր հակառակորդներուն աչալըջութիւնը ու խիստ հսկողութիւնը խաբելով, որոնք զայն Լէտիպրէնտի ու Թապանլուի Հիւսիսակողմը կը կարծէին, յանկարծ դէպի հարաւ ուղղուեցաւ և Տէ՛վէթ-Ստորբի անգլիական պահակազօրքը պաշարեց, որ 400 հոգիէ կը բաղկանար և ըստիպեց անպայման կերպով անձնատուր ըլլալու : Այս զինուորական գործողութիւնը ճշնպէս արագ կերպով կատարուած էր որ Պէթօֆօնիթայն գտնուող անգլիական զօրքերը՝ որք Տէ՛վէթ-Ստորբէն հազիւ 70 քիւլօ մէթր հեռուն կը գտնուէին, չ'կրցին ժամանակիմ հասնիլ և պաշարեալ պահակազունքը ազատել : Սակայն Լորտ Ռօպըրթսի նախորդ մէկ հեռագրէն կը հասկցուի որ անգլիական գունդ մը Պարքըր գնդապետին հրամանատարութեան տակ զրկուած էր Տէ՛վէթ-Ստորբի օգնութեան : Բայց ճամբան կտրուած ըլլալով, չ'կրցաւ իրեն տրուած պաշտօնը ի գլուխ հանել : Անգլիացիք աւճապարանօք շարժման մէջ դրին այդ չըջթային ամբողջ տրամադրելի գունդերը, բայց երբ մեծ թուով պաշարեալ քաղաքի առջևը հասան արդէն Տը Ուէթ զօրավարը ըստ իր սովորական ռազմագիտութեան՝ քաղաքը պարպած էր :

Անգլիական պատերազմական նախարարութեան հրատարակած ցուցակէն կը հետեւի թէ՛ Տէ՛վէթ-Ստորբի մէջ գերի ինկած Անգլիացոց թիւը 451 սպայ և զինուոր է : Վերջին հեռագրէն կ'իմանանք թէ՛ զինուորները ազատ արձակուած են, իսկ սպաները վար գրուած են :

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Հէրցօլի գունդէն 500 Պօէր յարձակած են Սէթթըլ զօրավարին վրայ Լուքնհօնի արևմտեան կողմը 50 մը զոն հեռու : Պօէրները շատ սքանչելի դիրք մը ունէին, Քօբէններու շրթայ մը կար՝ որուն ետև հիանալի կերպով պատսպարուած էին :

Անգլիական թնդանօթները ջանացին զանոնք իրենց դիրքերէն վանել, բայց Պօէրները ամրապէս իրենց դիրքերը պահեցին : Քարի ոստիկանագունդը ջանաց չըջապատել զանոնք, բայց Պօէրներուն սոսկալի կրակէն ստիպուեցաւ այդ դիտաւորութեանէն ետ կենալ :

Այս պահուն Պօէրները Անգլիական պաշարակառքերուն վրայ յարձակում մը կ'ընէին : Բայց ռմբկասանդերը որոտալ սկը-

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

սելուն պէս, Պօէրները ետ կեցան պաշարակառքերը գրաւելու միտումէն :

Վերջապէս Անգլիական հետեակազօրքը կրցաւ Պօէրները իրենց դիրքերէն դուրս թափել, բայց այնչափ ուշ կատարուեցաւ այս գործողութիւնը, որ Պօէրները ժամանակ ունեցան իրենց ձիերուն վրայ հեծնելով հեռանալու : Անգլիացիք չհետապնդեցին զանոնք, պետին անհարթութեանը և իրենց ուժասպառութեանը պատճառաւ : Կուրը ամբողջ 9 ժամ տևեց . 5 Պօէրի դիակները գտնուեցան, Անգլիական կորուստները քիչ են :

Լուրջօնը գրաւուեցաւ :

Տը Ուէթի ուզած 800 ձիերը վերջերս այդ գիւղէն անցնելով իրենց տեղը հասան :

ԱնԳԼԻԱՅԻ լրտես մը որ շատ ամիսներէ ի վեր գերի էր . վերջերս Մէկալէսպէրկէն Բիէթթի մարտիցաւորի եկաւ . կըսէ թէ Տըլարէյ զօրավարը Մէկալէսպէրկէն կը գտնուի 1000 մարդով և կը մերժէ իր գունդին մէջ ընդունիլ ա՛յն Պուրկըրները որքէջը թուական խորհուրդ տուած են Անգլիական իշխանութեանց :

ՓՈՔՐԻԿ ՄԱՐԿԱՍՊԱՆՈՒՀԻ ՄԸ

Լիլի մօտերը 8 տարեկան աղջիկ մը՝ 2 ու կէս տարեկան աղջիկ մը սպաննած է, կանկանդակ մը գողնալու համար : Ահաւասիկ ոճրին պարագայները :

Արմանթիէրի մէջ Բէքինիէր փողոցը կը բնակի 42 տարեկան Լուի Տէլլի անուն մարդ մը որ 4 զուակ ունի : Ամենապակալի թշուառութիւն կը տիրէ այս ընտանիքին մէջ . հայրը հիւանդանոցն է և այդ ընտանիքը հասարակաց գթութեամբ կ'ապրի . Զաւակներէն մին փալանթին, 8 տարեկան, դպրոց չ'երթար և բոլոր օրը փողոցին մէջ կը խաղայ իր կրտսեր եղբօր նարուէնի հետ :

Մի քանի օրեր առաջ երկու տղաքները փողոցին մէջ Նէլլի Ձէլի Վէզըտ անուն 2 ու կէս տարեկան աղջիկ մը կը տեսնեն որ կարկանդակ մը բռնած էր ձեռքը . Վալանթին կուզէ ձեռքէն առնել, բայց աղջիկը թող չտար :

Այն ժամանակ դեռատի մարդասպանը Ձէլի իրենց տունը կը տանի և զայն հին պալուսակի մը խորը նետելով խոհանոց կը վազէ ու դանակ մը առնելով կը վերադառնայ և խեղճ աղջկան 12 հարուած կ'իջեցնէ :

Բայց միայն սրունքէն զարկած էր և վէրքերը մահացու չէին, աս տեսնելով Վալանթին կը կատղի և կօչկակարի կտրոց մը առնելով իր բոլոր ուժովը փոքրիկ աղջկան փորը կը խօթէ ու կը փախչի :

Ձէլի ոյժը կ'ունենայ սանդուխներէն իջնելով իրենց տունը դառնալու, որ մօտ էր, ու արիւնաթաթախ մօրը ոտքերուն առջև կը փռուի :

Աղիքները բաց վէրքէն դուրս կը թափէին, կանչուած բժիշկները յայտարարեցին որ վերաուրեալին վիճակը անյոյս է :

Վալանթին ու իր եղբայրը նոյն իրիկունը ձեռքազաւուած են, մանկասպանը ջանացած է ոճիրը եղբօրը վիզը փաթթել . բայց վերջ ի վերջոյ ճշմարտութիւնը խոստովանած է :

Ամբողջ Արմանթիէն մեծ յուզման մէջ է :

ՊԱՐԻԻԷԻ Պէյի յուղարկաւորութիւնը կատարուեցաւ երկուշաբթի մեծ շքով : Պարիէր պէյ ծանօթ Խմբագիր մ'էր որ 1868-էն ի վեր Եգիպտոս կը գտնուէր, և վարած է յաջողաբար 4 Ֆրանսերէն թերթերու Խմբագրութիւնը . 1885 ին Պաւլոր էժիքաիէնը, 1895 ին էֆօ Տ'Օրիանը, 1899 ին Ժոննայ էժիքաիէնը և Պիլլըքէն Տ'էժիքը : ԱՐՁԱՌԱՅԻՆ ժամտաստի 5 դէպքեր պատահած են Խարթումի մէջ :

ԿիՊՐՈՍ ի կառավարութիւնը Ալէքսանդրիայէն մեկնող նաւերուն վրայ գրած քարանթիւնան հինգ օրուան իջեցուցած է : ՀէլՈՒՍՆԻ մէջ Խալիլ անուն մէկը, կիրակի օրը դանակի հինգ հարուածներ իջեցուցած է իւր տիրուհույն Տիկին Մերիսի :

Խալիլ ձերբակալուած է և հարցաքննութիւնը կը շարունակուի :

Տիկին Մերիսի վիճակը չափազանց ծանր է :

Ոճրին շարժառիթը եղած է Խալիլի մէկ խնդրանքը, որ է 30 շրջ . ողջ :

ԹՈՒՐԿԻՆՈՅ Բարձր . Գօմիսէր, Ն. Վ. Մուկթար փաշայի փեսին Շէվքի փաշայի ընտանիքը, Կ. Պոլսէն հոս հասած է :

ՔԱՂՈՒԱԾ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԷ

Լ'ԱՐՄԵՆԻԷՆ կը քաղենք հետեւեալները :

ԲՐՕ-ԱՐՄԵՆԻԱ . — Ոստիկանական նախարար Շէֆքի պէյ եռանդը և գործունէութիւնը կը կրկնուպատկէ, դառ դաւի վրայ կը հնարէ : Սեպ . 15էն ի վեր 600ի չափ Հայեր ձերբակալուած են ամենասահմանից պատճառներով . գլխաւորաբար « վասնդաւոր յեղափոխական » Զարեհ Քօչեանը ճանչնալու ամբաստանութեամբ, մինչդեռ փրկուող յեղափոխականը Աթէնք է, և հոն տեղի Օսմանեան դեսպանին իմացուցած է իր Աթէնք գտնուիլը և խնդրած է որ այդ պատրուակով եղած հալածանքները վերցուին :

ԱՊՏԻԼ ՀԱՄԻՏ Բ .

Պ . Ժօրժ Տօրի այս անուան տակ « Ռըվիւ-Պլէօ » ի վերջին թիւին մէջ Սուլթանին վրայ նշանաւոր ուսումնասիրութիւն մը հրատարակած է, ուրկէց կը քաղենք սա կտորները .

« 1896 ին երբ Սուլթանը Պապը Ալի ցոյցէն յետոյ, որ մեծ ջարդերէն քիչ մը առաջ եղած էր, ընդունեց Հայոց Պատրիարք Աջըգեանը, անոր սա խօսքերը ըսած էր . « Թերևս կուզեն (Հայերը) այդ միջոցներով Եւրոպական միջամտութիւն մը յառաջ բերել, լաւ . ուրեմն ապահով եղէք որ օտար նաւատորմերը կրնան իմ նեղուցներէս անցնիլ ու Եւրոպական զօրաբանակները կրնան մայրաքաղաքս գրաւել . բայց հողիս վրայ ոտք կոխելէ առաջ, Պոսֆորի ջուրերը բոլոր Հայերուն արեամբը պիտի ներկուին » : Մերունի Պատրիարքը սարսափած Սուլթանին ոտքերը նետուեցաւ ու անոր գթութիւնը հայցեց . բայց խալիֆան առանց ալ զայն մտիկ ընել ուղեւոր կոպտութեամբ հրամայեց որ մեկնի :

Մինչդեռ երբ մեծ ջարդերէն յետոյ

Ազարեան Պատրիարքին շնորհած ունկընդրութեանը ժամանակ կ'ըսէր թէ ջարդերուն երբէք պատասխանատու չէր, ինքզինքը կ'արդարայնէր ու կը մեղադրէր այդ ջարդերուն հեղինակները :

Մոռացում և կամ կեղծաւորութիւն . Սուլթան Համիտ իր բրածը չ'խոստովանիր » : « Արմէնիա » կը գրէ .

— Բ . Գուռը նոր շրջաբերականով մը ազդարարեց տէրութիւններին, որ Պաղեստին ուխտի գնացող Հրեայներն երեք ամսէ աւելի չպիտի կրնան հոն մնալ :

— Գարատաղի սահմանազլիւն վրայ Գարատաղիներին և մահմէտականներին միջև նոր ընդհարում մը պատահած է այս օրեր : Երկու Գարատաղիներ սպանուեր են, որոնց գլուխները մահմէտականները Շքոտրա տարեր են, ուր վայրենի ուրախութեան մեծ ցոյցերով ընդունուեր են : Քրիստոնէութիւն բացուած է այդ միջադէպին վրայ :

« Իրաւունք » ի մէջ կը կարդանք .

Մարտէյլէ եկած գրութիւն մը կը գանգատի Եւրոպայի այցելու հովիւ Իւթիւճեան Գէորգ եպիսկոպոսի դէմ, յայտարարելով թէ՛ յիշեալը բացարձակապէս արգելք կը հանդիսանայ Մարտէյլ քահանայի մը պաշտօնի կոչուելուն, ուր պէտք կայ և նոյն իսկ Պատրիարքարանի այս մասին ըրած անուանումը մերժելով, հակառակ Հայ եկեղեցւոյ օրինաց կը քահանայադրած է և որ աւելին է խոստովանութիւն ալ կ'ընէ :

Յիշեալ գրութենէն կ'իմանանք որ Գէորգ եպիսկոպոսի՝ հակառակ իր պաշտօնի և կոչման, Մարտէյլի մէջ այդ կերպով կառուած մնալը թէ՛ տեղւոյն հայ գաղթականութեան մեծագոյն մասին և թէ՛ Հողաբարձութեան յայտնի դժգոհութեանը պատճառ դարձած է :

Մշակ իր 204 թուով ջերմ հրակէր կը կարգայ Հայ ազգին, մահարձան մը դնել Գրիգոր Զանչեանի գերեզմանին վրայ, իբր արտայայտութիւն « մի ամբողջ ժողովրդի երախտագիտութեան » :

ԲԱԶՄԱՎԷՊԻ 1901 տարւոյ բաժանորդագրութիւնն բացուած է և պիտի ունենայ հետեւեալ ուղղութիւնը :

ԲԱԶՄԱՎԷՊԸ կը հրատարակուի ամենամսոյ սկիզբն : Կը պարունակէ նախ Խմբագրական առաջնորդող յօդուած մը . յետոյ հայ մատենագրական, ստուգաբանական, պատմական, լեզուաբանական աշխարհագրական, հնախօսական յօդուածներ, և Հանդէս հանդիսից տիտղոսով գրական և բանասիրական թերթերու վրայ կարևոր տեսութիւնք, և ազգային քրօնիկ վերնագրով հետաքրքրական կարևոր նոր տեղեկութիւնք մեր ժամանակակից գրական և ընկերական լրոց վրայ : ԲԱԶՄԱՎԷՊԻ այս տարուան իբրև նորութիւն, պիտի հրատարակէ թրքահայ գրական և այլ նշանաւոր անձանց համառօտ կենսագրութիւնը, յիշելով անոնց հեղինակութիւնք և տպելով անոնց կենդանագիրն : ԲԱԶՄԱՎԷՊԻ նորատիպ մատենաները, զորս իբրև նուէր կ'ընդունի, հակիրճ քննադատականով մը կը հրատարակէ : Բաց աստի կը հրատարակէ Եւրոպական դասական ոտանաւորներու աշխարհաբար թարգմանութիւնք : Քաղաքական տեսութիւն և ազգային թերթերու քաղուածոյ ցանկն :

—Ամիսներ առաջ՝ « Բազմավէպ » ով հրատարակած էինք որ մեր ապարանն էր կողմէն վիճակահանութեան գրած է 1 ֆր. էն 70 ֆր. արժող՝ հետաքրքրական և օգտաւար գրքեր, և այն ամէնն որ կարող են վեր Հայ որբերուն ի նպաստ հրատարակած « Որբունի » թերթին 10 բաժանորդ գանել, արժանի են վիճակահանութեան մէկ թուի։ Այժմ կը փութանք յայտնելու, որ այդ վիճակահանութիւնը պիտի կատարուի գալ տարի Մայիս 1ին (Ն. Տ.)։ Ուստի հրաւերը մինչև նոյն օրն կը զօրէ։

ԲԱԶՄԱՎԷՊ

ԶԱՐԳ ԱՌ ՔՈՇՈՅԻԿ

Ե՛րբ պիտի վերնան

- Լրագիրներու մէջէն սուտ ու փուտ լուրերը.
 - Պատրաստ ծախուած խահուէին մէջէն լէպ-լէպին ու սիսեռը.
 - Յիսուսնոց կնիկներուն պօստ քսուելները.
 - Խաճաճ էջի մուխալա տուժասի կօշիկները.
 - Թաղականներու մեծ ազալութիւնները.
 - Պիպէտի պէս հոգի վառող խլավուզները.
 - Ձրի լրագիր կարգացող օրախօսիները.
 - Թրախօմայական խրըրլիքները.
 - Արուն-բերան խաչագողները.
 - Կուսակցական կռիւները.
 - Վարժարաններու անբարեկարգութիւնները.
 - Վերջապէս ե՛րբ պիտի վերնան սա առտու իրիկուն իրարու յարողող տնակործան մտա-ները.
- ՁՈՒԹԱԿ
ԲՕԺՕԺԿ — Երեւոյթին նայելով, ասոնք յաւիտեանս յաւիտեանից վերնալիք չունին։
ՀԱՅԵԼԻ

ՕՐԱՑՈՅՑ

Պարզ եւ Ընդարձակ

Սեփականութիւն Ս. Փրկչի ԱԶԳ. Հիմնադրանքի ՆՈՅՆՊԷՍ

ՕՐԱՑՈՅՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Պարզ եւ Ընդարձակ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ 1901 ՏԱՐԻՈՅ

Կը վաճառուի Կ. Երզնկացեանի խանութիւն Ի Եարա Ապտ-իւլ-Ազիզ

ԾԱՆՈԹ. — Երջականներէ եղած յանձնարարութիւնը փութով կը կատարուին։

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՔԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՐԱԿԻ 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900

589	8532	4280	1418	7206	6880
8804	7073	3548	1916	2794	3496
687	4039	1025	6763	6508	7271
3231	3462	5302	2761	4382	7071
600	5120	1590	6261	7218	6737

ՀՅԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿԻ 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900

5268	3775	3255	8954	6774	8250
3014	4901	8744	9362	9319	4478
845	2833	4784	1014	4295	6964
9477	1814	7353	2044	3493	5447
	8773	3789	5253		

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՄԱՆԿԱՐԱՐՁ ՏԻՎԻՆ ՍՈՑԻԱԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

Շարա-Ապտիւլ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խորունֆիլէն փոխադրած է Եարա Ապտիւլ Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին գիմաց, Անմէտ պէյ Ապտիւլ Բազիբի 20 թիւ սեփականութեան մէջ։

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով գահիրէրնակ ազգայնոց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն։

ԻԳՆԱՏԻՈՍ Կ. ՍԱՐԱՑԵԱՆ

ԴԵՐՁԱԿ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պապ - էլ - Հասիս Թիւ 23

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անգղիացի վաճառական - գերձակ ԺՕՆ ԲՕԼԱԲՕԹԻ նման կարեւոր սան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նորութիւններուն կատարելագոյն հմուտ եւ փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրաին գիմացը, նորաչէն խանութիւնը մէջ։

Թէ՛ իրեն գիմող երկու սեռէ Պատ. յաճախորդը ըստ ամենայնի գոհ պիտի մնան, արհեստի նորութիւն տեսնելով, նորածեւութեանց զանազանութիւններ գտնելով, եւ մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր եւ ճաշակաւոր զգեստներ ունենալով։

Ա Ձ Դ

Եգիպտոսեան ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէն մեկնած ըլլալով՝ այժմ Եգիպտոսի համար Արեւելեան Մամլոյ ներկայացուցիչն է Գործակալն եղած է Տիար Օհան Խնտաւեան, որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին։

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ գալոցական, գիտական, պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով։ Գաղաքէն հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ գումար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յԱզգ. վարժարանն ի Տարա-էլ-Կիւնէնա։

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարձինները։

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է ընդունութեան մէկ միլիար աւելի է։

Ս. ԼԻՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

« ԱՐՇԱԼՈՅՍ »

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՐԸ

Օսմանիյե դեղատանին դիւնացի փող ցին մեք.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մտքուր և ճաշակաւոր պատրաստուելու պարմանաւ, կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երջարեւակներ, Գիտեր, Հրախուսքեր, Մանսագրներ, Տեղեխագիրներ, Կանոնագիրներ, Տուներ և այլ և այլ վսճուականական յանձնարարութիւններ։

Ամենակատարեալ ճշգրտահաշիւուն և չափաւոր գին։

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ.

ՄԻՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅԻՒ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուռքի) պիտի գտնէք միմիայն 22 'Ղ'ն ի նիքէլ, կոթէն լարուող սիրուն ժամացույցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է։ Նոյնպէս ամեն տեսակ ռակի ժամացույցներ 120 Ղ'ն է սկսեալ մինչև 2500 Ղ'ն։ Ինչպէս նաև արժաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացույցներ. պատի և բծնալի բազմազան Բանտիւլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք։

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան փոխօկրաքներու։

Ա. ՊԱՆԵԱՆ

Մ Ա Թ Ի Լ Տ

(Գաղթականաց կեանքէն)

ԳԻՆ 50 ՄԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԻՎՐԻՑ

Ակունաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քուրալ ձայն պատրաստուած սոյն հաւաքածոյին զնել փափաքողներն կամ բաժանորդացուելու պատրաստ են, կրնան գիմել՝ Մոշարյա ի ժՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր - Տնօրէնն։

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՆ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընդունութեան մէկ միլիար երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրօսաւորակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ։

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործաւորաւոր յԱզգայնագրիւն։